

ՄԱՄՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 25-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Կոմիտասյան դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան, Հոգեշնորհ Տ. Անուշավան աբեղա Ժամկոչյանի վարդապետական թեզի բանավոր պաշտպանությունը, որի թեման էր՝ «Կոմիտաս վարդապետի կյանքը և նրա դերը Հայ Եկեղեցում»: Թեզի պաշտպանությանը ներկա էին Գերաշնորհ, Հոգեշնորհ և Արժանապատիվ Հայրեր, սարկավագներ, ճեմարանականներ, դասախոսներ և հյուրեր:

Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Այնուհետև քննիչ հանձնախումբը (նախագահ՝ Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյան, անդամներ՝ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյան, Հոգեշնորհ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյան) ներկայացրեց իր կարծիքը թեզի վերաբերյալ և տրվեց իր համաձայնությունը բանավոր պաշտպանության: Անուշավան աբեղան հակիրճ կերպով ներկայացրեց իր աշխատանքը, որը քննիչ հանձնաժողովի կողմից տարակարծությունների տեղիք տվեց: Հայր Սուրբի հիմնավոր պատճառաբանություններից հետո թեզի պաշտպանությունը միակարծիք դրական ընդունվեց և արտոնվեց Հայր Սուրբին ստանալու մասնավոր վարդապետական չորս աստիճաններ:

Հուլիսի 28-ին, արդեն ավանդություն դարձած, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, Հայր Անուշավանին շնորհվեց մասնավոր վարդապետական չորս աստիճաններ և գավազան՝ վարդապետելու և բարբառելու աստվածային ճշմարտությունները: Սրբազան Հայրն իր խոսքի մեջ հայրաբանական վկայություններով բացատրեց վարդապետական աստիճանների ու գավազանի խորհուրդը և իր շնորհաբաշխ աջով Աստծո օրհնությունն ու շնորհները բաշխեց Հայր Սուրբին և ներկա հավատացյալներին:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԴՊԻՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ